ՀԱԿՈԲ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Կենսական դժվար իրավիճակներում հայտնված երեխաների խնամքն ու պաշտպանությունը միշտ էլ եղել են պետության, հասարակական կազմակերպությունների, առանձին անհատների, ինչպես նաև տարբեր գիտությունների ուշադրության կենտրոնում: ՀՀ-ում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տեսակների ցանկը, **դրանցում երեխաների տեղավորման չափանիշները** հաստատվել են 2002 թվականի դեկտեմբերի 26-ին Կառավարության N 2179-Ն որոշմամբ և լրացումներ ու փոփոխություններ են կատարվել 24 մարտի 2005 թվականի N 381-Ն որոշմամբ: Վերջին որոշման հավելվածում առանձնացվում են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող 7 տիպի հաստատություններ: Դրանցից 5-րդը երեխաների խնամքի ցերեկային հաստատությունն է, որն իրականացնում է երեխաների խնամքի, սոցիալ-հոգեբանական, կրթական և դաստիարակչական աշխատանքներ: Ցերեկային խնամքի կենտրոնների ցանցի և նրանց կողմից տրամադրվող ծառայությունների ընդլայնումը դրված է պետության կողմից դժվար կենսական իրավիճակներում հայտնված երեխաների նկատմամբ կիրառվող քաղաքականության հիմքում: Այդ քաղաքականության տրամաբանությամբ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունները վերափոխվում են երեխաների խնամքի ցերեկային հաստատություններում: Վերջիններիս առջև խնդիր է դրվում կանխարգելելու ընտանիքի և երեխայի՝ կենսական դժվար իրավիճակում հայտնվելը, իսկ հայտնվելու դեպքում նպաստել նրանց սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մանկավարժական կազմավորումների վերականգնմանը և արդյունքում՝ երեխայի՝ իր կենսաբանական ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի ապահովմանը, ինչպես նաև՝ անհնարինության դեպքում ընտանեկան հիմքով այլընտրանքային խնամքի կազմակերպմանը:

Այսպես՝

• 2015 թվականի հուլիսին «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն»-ը դադարել է գործել որպես գիշերօթիկ հաստատություն և վերանվանվել «Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն»-ի, որտեղ տեղափոխվել են «Խարբերդի մասնագիտացված մանկատան» չափահաս 80 սան:

• 2016 թվականի օգոստոսին «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատությունը դադարել է գործել որպես գիշերօթիկ հաստատություն և վերանվանվել է «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն»-ի: Վերջինս իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան 150 երեխայի և նրանց ընտանիքների խնամքը, որից 100 երեխայի խնամքը կենտրոնում, 50-ը՝ արտակենտրոն: [1]

Այս ցանկը կարելի է շարունակել, թեև մեր նպատակը դա չէ: Միայն նշենք, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում մնացել և դեռևս գործում են երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ ընդամենը 6հաստատություն, որոնք իրականացնում են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ (6–18 տարեկան) երեխաների խնամքը և դաստիարակությունը: Հաստատություններում խնամվող երեխաների խնամքը տարանջատվում է կրթությունից և կազմակերպվում է հանրակրթական դպրոցներում՝ երեխային հասարակությանն ինտեգրելու նպատակով: [2]

Հոդվածի նպատակը երեխայի խնամքի և պաշտպանության ցերեկային կենտրոններում սոցիալ–մանկավարժական գործունեության համակարգի ձևավորման անհրաժեշտության հիմնավորումն ու որպես այդ համակարգի զարգացման ուղի՝ սոցիալական մանկավարժի կողմից մատուցվող ծառայությունների փաթեթի մշակումն է (որպես փորձագետ սոցիալական մանկավարժ 2016 թվականին մասնակցել եմ «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն»–ի կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների փաթեթի մշակմանը):

Սոցիալ–մանկավարժական գործունեության համակարգի ձևավորումն ու զարգացումը ենթադրում են այդ հաստատություններում սոցիալ–մանկավարժական գործունեության նպատակի, խնդիրների սահմանում, սուբյեկտների ընտրություն և նրանց պարտականությունների, գործառույթների, մատուցվող ծառայությունների հստակեցում, սոցիալ–մանկավարժական գործունեության արդյունավետության կամ որակի գնահատման մեխանիզմների մշակում և ներդրում, սակայն մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ լուծում տալ վերոնշյալ բոլոր հիմնահարցերին: Ելնելով դրանից՝ հոդվածում կհստակեցնենք միայն սոցիալ–մանկավարժական գործունեության հիմնական սուբյեկտի՝ սոցիալական մանկավարժի կողմից մատուցվող ծառայությունները:

Կենսական դժվար իրավիճակում հայտնված երեխաների խնամքն ու պաշտպանությունն իրականացնող ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական մանկավարժի մասնագիտական ծառայությունների հստակեցումը պետք է սկսել կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների առանձնացումից, որոնք էլ կպայմանավորեն դրանցից յուրաքանչյուրում ընդգրկված սոցիալական մանկավարժի կողմից մատուցվող ծառայությունների յուրահատկությունները:

Ցերեկային խնամքի կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունները բաժանում ենք չորս հիմնական խմբերի.

1. բազմամասնագիտական խմբի կողմից մատուցվող համալիր ծառայություններ, որոնց միաժամանակ մասնակցում են մի քանի մասնագետներ, իհարկե, իրենց մասնագիտական կոմպետենտության սահմաններում և իրավասությունների շրջանակներում,

2. առանձին մասնագիտական ծառայություններ, որոնք առանձին–առանձին մատուցվում են սոցիալական մանկավարժի, հոգեբանի, սոցիալական աշխատողի, իրավաբան խորհրդատուի, բժշկի, հատուկ մանկավարժի կողմից,

3. հետազոտական–ներդրումային ծառայություններ,

4. մեթոդական աջակցության ծառայություններ:

Ծառայությունների վերոնշյալ չորս խմբերից յուրաքանչյուրում ներկայացնենք սոցիալական մանկավարժի կողմից մատուցվող ծառայությունները:

1. **Բազմամասնագիտական խմբի կողմից մատուցվող համալիր ծառայություններ.**

• սպասարկման տարածքի կենսական դժվար իրավիճակում հայտնված երեխաների և ընտանիքների կարիքների բազմապրոֆիլային (համակողմանի) գնահա-

տում շահառուների բնակության վայրում բազմասնագիտական խմբի կողմից,

• կենտրոնի բազմամասնագիտական թիմի կողմից կազմվում է երեխայի սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մանկավարժական վերականգնման և զարգացման անհատական ծրագիր, որտեղ հստակեցվում են, թե մասնագետներից յուրաքանչյուրը, ինչպես նաև ընտանիքը, որ խնդրի լուծման, որ գործառույթի համար է պատասխանատու, հստակեցվում է ժամանակահատվածը, գործողությունների հաջորդականությունը,

• կենտրոնի բազմամասնագիտական թիմի կողմից իրականացվում են անհատական սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մանկավարժական վերականգնման և սոցիալական զարգացման ծրագրի գործողություններն ըստ նախագծված պլանի և գործառութային պատասխանատվության, միասնական ներգործության ապահովման սկզբունքների հիման վրա,

• գնահատված կարիքներին համապատասխան իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի ներքո գտնվող երեխաների վարքագծի և զարգացման շեղումների կանխարգելմանը ուղղված միջոցառումներ,

• խորհրդատվական օգնության տրամադրման միջոցով աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի ներքո գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներին՝ «ծնող-երեխա» իրական փոխհարաբերությունների բացահայտման, ծնողավարման, ընտանեվարության հմտությունների զարգացման և հոգեբանական խնդիրների շտկման նպատակով,

• իր իրավասությունների շրջանակներում աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի ներքո գտնվող երեխաների և նրանց ընտանիքների սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-իրավական խնդիրների լուծմանը՝ նպաստելով երեխաների բնականոն զարգացմանը՝ համագործակցելով տեղերում գործող երեխաների հիմնախնդիրներով շահագրգիռ կազմակերպությունների հետ,

• իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաների ընտանիքների, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի ներքո գտնվող երեխաների ընտանիքներում կոնֆլիկտային իրավիճակների կանխարգելմանն ու հաղթահարմանն ուղղված աշխատանքներ՝ նպաստելով ընտանիքում բարենպաստ մթնոլորտի վերականգնմանը,

• իրականացնում է կանխարգելիչ աշխատանքներ՝ կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի ներքո գտնվող այլ երեխաների թափառաշրջության, մուրացկանության, վնասակար սովորությունների ձեռքբերման կանխարգելման նպատակով՝ համագործակցելով երեխաների հիմնախնդիրներով շահագրգիռ տեղերում գործող կազմակերպությունների հետ,

• կենտրոնում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ դաստիարակության դժվարություններ ունեցող, վնասակար սովորություններով, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաներին տրամադրում է թիրախավորված աջակցություն՝ գնահատված սոցիալ-հոգեբանական

կարիքներին համապատասխան՝ համագործակցելով երեխաների հիմնախնդիրներով շահագրգիռ տեղերում գործող կազմակերպությունների հետ,

• բացասական սովորություններ ունեցող ընտանիքների անդամների հետ վերականգնողական, թերապևտիկ աշխատանքների իրականացում, օրինակ՝ ալկոհոլիզմով, թմրամոլությամբ տառապողների հետ,

• երեխաներին և ծնողներին սոցիալ-իրավական իրազեկման աշխատանքների իրականացում,

• իրականացնում է սեմինարներ՝ պատրաստելով դեռահասներին և երիտասարդներին ընտանիք կազմելուն և ընտանեկան հարաբերություններին, ծանոթացնելով ընտանեկան էթնոմշակութային ավանդույթներին,

• իրականացնում է փոխարինող ընտանիքներում գտնվող երեխաների կենսաբանական ընտանիքների վերականգնմանը և ուղեկցմանն ուղղված հոգեբանական, սոցիալ-մանկավարժական և սոցիալ-իրավական աշխատանքներ՝ նպատակ ունենալով ապահովել երեխայի վերադարձը կենսաբանական ընտանիք,

• սոցիալ-մանկավարժական, սոցիալ-հոգեբանական և սոցիալ-իրավական աջակցության աշխատանքներ սպասարկման տարածքի ԱԾԽՄ՝ երեխաներին որդեգրելու կամ խնամակալություն/հոգաբարձություն ստանձնելու կամ խնամատարության վերցնելու ցանկություն հայտնած ընտանիքներին,

• սպասարկման տարածքում բնակվող կենսական դժվար իրավիճակներում հայտնված երեխաների ընտանիքներում կոնֆլիկտային իրավիճակների կանխարգելման ու հաղթահարման ուղղությամբ բազմամասնագիտական աշխատանքների կազմակերպում կենտրոնից դուրս,

• սպասարկման տարածքում բնակվող երիտասարդ կենսական դժվար իրավիճակներում հայտնված ընտանիքներին սեռական կյանքի մշակույթի, հղիության և մայրության, ծնողավարության հետ կապված խնդիրների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում՝ կենտրոնից դուրս:

2. Առանձին մասնագիտական ծառայություններ.

• սոցիալ-մանկավարժական դիագնոստիկ, վերահսկողական, գնահատողական նպատակներով. կենտրոնի կողմից ծառայություններ ստացող շահառուների տունայցերի իրականացում,

• իրականացնում է մասնագիտական կողմնորոշում, աջակցում է խնամք ստացող երեխաների աշխատանքային հմտությունների ձևավորմանը և զարգացմանը,

• երեխաների զարգացմանն աջակցելու նպատակով կազմակերպում է երեխաների հանգիստը, ազատ ժամանցը, այդ թվում՝ ապահովելով նրանց մասնակցությունը մարզական և մշակութային միջոցառումներին, արշավներին, աջակցում ընտանեկան տոների կազմակերպմանը,

• ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կենսական դժվար իրավիճակներում հայտնված կամ կենսական դժվար իրավիճակներում հայտնվելու վտանգի ներքո գտնվող՝ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններից դուրս մնացած (կամ այդ հաստատություններ չհաճախող) երեխաներին ուսումնական հաստատություններում տեղավորելու և նրանց հաճախելիությունն ապահովելու համար,

• իրականացնում է ծնողների մանկավարժական մշակույթի ձևավորմանն ուղղված սոցիալական ուսուցման աշխատանքներ,

• տրամադրում է սպասարկման տարածքի կենսական դժվար իրավիճակներում հայտնված ընտանիքներում կարճաժամկետ ճգնաժամային իրավիճակների հաղթահարմանն ուղղված սոցիալ-մանկավարժական աջակցություն և շտկում՝ կենտրոնից դուրս,

• ծնողների և երեխաների հետ իրա-

կանացնում է խորհրդատվական աշխատանք պրոբլեմային դաստիարակչական իրավիճակների մոդելավորման միջոցով խնդիրների լուծման համար անհրաժեշտ մանկավարժական կարողությունների ձևավորման նպատակով, ինչը կնպաստի ընտանիքի դաստիարակչական հնարավորությունների ամրապնդմանն ու զարգացմանը,

• իրականացնում է երեխայի սոցիալ-մանկավարժական և սոցիալ-հոգեբանական վերականգնման և սոցիալական զարգացման անհատական ծրագրում ընտանիքի կողմից նախատեսվող գործողությունների կատարման նպատակով խորհրդատվություն և մեթոդական աջակցություն,

• ընտանիքում կարճաժամկետ ճգնաժամային իրավիճակներում իրականացնում է սոցիալ-մանկավարժական աջակցություն և շտկում,

• իր սպասարկման տարածքում բնակվող երեխաների ընտանիքների, այդ թվում՝ փոխարինող ընտանիքների համար կազմակերպում է ուսուցման դասընթացներ՝ քաղաքացիական ակտիվ և արդյունավետ կենսակերպի ձևավորման, միջանձնային հարաբերությունների կարգավորման, ծնողավարման հմտությունների ձևավորման ու զարգացման նպատակով, ինչպես նաև ձևավորում է ինքնօգնության խմբեր, կազմակերպում և (կամ) տրամադրում է անհատական և խմբային խորհրդատվություններ՝ երեխաների խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու, նրանց սոցիալական մեկուսացումը կանխարգելելու նպատակով,

• կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող երեխաների սոցիալական միջավայրի սուբյեկտներին, այդ թվում՝ ընտանիքների և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններին, ըստ անհրաժեշտության տրամադրում է խորհրդատվություն՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաներին մասնագիտական սոցիալական ծառայությունների տրամադրման վերաբերյալ,

• իր սպասարկման տարածքում բնակվող՝ դաստիարակության դժվարություններ ունեցող, վնասակար սովորություններով, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաներին թիրախավորված աջակցության նպատակով համագործակցում է երեխաների հիմնախնդիրներով շահագրգիռ տեղերում գործող կազմակերպությունների հետ,

• ընտանիքին սոցիալական պաշտպանության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում,

• իրականացնում է ընտանիքին, մասնավորապես ծնողներին տրված երաշխավորությունների կատարման, ինչպես նաև մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատում՝ ընթացքի վերահսկողություն մոնիթորինգի միջոցով (դիտում, հարցաթերթ, զրույց, թեստ),

• իրականացնում է ընտանիքներում ռիսկայնության հետագա դրսևորումների կանխատեսումներ, նախագծում է դրանց կանխարգելմանը և հաղթահարմանն ուղղված համապատասխան երաշխավորություններ,

• մասնագիտական կողմնորոշման նպատակով իրականացնում է մասնագիտական գործունեության ոլորտներին, այդ թվում ներկայումս մեր երկրի աշխատաշուկայում պահանջարկ վայելող մասնագիտություններին ընդհանրականորեն ծանոթացնելուն ուղղված և երեխաների անհատական հոգեբանական առանձնահատկությունների բացահայտման դիագնոստիկ աշխատանքներ,

• իրականացնում է մասնագիտական խորհրդատվություն սովորողների կողմից մասնագիտության, ինչպես նաև այն ձեռք բերելու համար համապատասխան ուսումնական հաստատության, գործունեության ոլորտի գիտակցված ընտրության և սոցիալ-մասնագիտական որոշակի հար-

մարման նպատակով,

• համագործակցում է հանրակրթական և հատուկ դպրոցների մանկավարժ-մասնագետների, առարկայական ուսուցիչների հետ երեխայի սոցիալ-մանկավարժական և սոցիալ-հոգեբանական վերականգնման ու սոցիալական զարգացման անհատական ծրագրի գործողությունների իրականացման իրենց մասի կատարման նպատակով,

• իրականացնում է ընտանիքի մանկավարժական ներուժի ակտիվացմանը, նրա նպատակաուղղվածության, պլանավորվածության մակարդակի բարձրացմանն ուղղված սոցիալ-մանկավարժական խորհրդատվական աշխատանքներ,

• իրականացնում է երեխաների հաղորդակցական և համագործակցային կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ,

• արտագնա աշխատանքի մեկնած անդամ ունեցող և փախստական ընտանիքների հետ սոցիալ-մանկավարժական և սոցիալ-հոգեբանական կանխարգելիչ և վերականգնողական աշխատանքների իրականացում,

• խորհրդատվական աջակցություն է ցուցաբերում կենտրոնի սպասարկման տարածքներում գործող Խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովներին, անհրաժեշտության դեպքում մասնակցում է դրանց նիստերին,

• մասնակցում է կենտրոնի սպասարկման տարածքում ԱԾԽՄ երեխաների համար փոխարինող (որդեգրող, խնամակալական/հոգաբարձուական, խնամատար և այլն) ընտանիքների որոնման, ընտրության աշխատանքներին,

• այլընտրանքային խնամքի արդյունավետության նպատակով իրականացնում է ընտրված փոխարինող ընտանիքների ծնողների սոցիալական ուսուցում և տրամադրում է սոցիալ-մանկավարժական խորհրդատվություն:

3. Հետազոտական-ներդրումային ծառայություններ.

• մշակում, ներդնում և կիրառում է Կենտրոնի ծառայությունների որակի գնահատման մեխանիզմներ, կոնկրետ մեթոդներ և մեթոդիկաներ,

• աջակցում է կենսական դժվար իրավիճակներում հայտնված ընտանիքների ու երեխաների հիմնախնդիրների նկատմամբ հանրային ուշադրության մեծացմանն ու իրազեկության աստիճանի բարձրացմանը,

• սպասարկման տարածքում իրականացնում է հետազոտական աշխատանքներ՝ ուղղված ընտանիքների և երեխաների սոցիալ-տնտեսական, առողջապահական, կրթամշակութային, բարոյահոգեբանական և այլ հիմնախնդիրների բացահայտմանը՝ ձևավորելով այդ ուղղությամբ տեղեկատվական բազա,

• ուսումնասիրում է արտերկրի համանման հաստատություններում հաջողված փորձը և պարբերաբար թարմացնում կենտրոնում տրամադրվող ծառայությունների մեթոդական փաթեթը,

• մասնակցում է ընտանիքների և երեխաների հիմնախնդիրների վերաբերյալ դրամաշնորհային ծրագրերին (և՛ ինքնուրույն, և՛ տարբեր գիտակրթական, հետազոտական կառույցների հետ համատեղ):

4. Մեթոդական աջակցության ծառայություններ.

• իրականացնում է կենտրոնի աշխատողների կարողությունների և հմտությունների զարգացմանն ու փորձի փոխանակմանն ուղղված շարունակական աշխատանքներ՝ մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով,

• կազմակերպում է մասնագիտական ուսումնական հաստատությունների հոգեբանություն, սոցիալական մանկավարժություն, սոցիալական աշխատանք, սոցիոլոգիա և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ֆակուլտետների ուսանողների մասնագիտական պրակտիկաները,

• ձեռք բերած տեղեկատվության և հետազոտական տվյալների հիման վրա մշակում է ընտանեվարության, ծնողա-

վարության խնդիրների վերաբերյալ մեթոդական նյութեր և աջակցություն ցուցաբերում այլ նմանատիպ կառույցներին,

• ցուցաբերում է մեթոդական աջակցություն ՀՀ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ այլ և նմանատիպ հաստատությունների վերակազմավորման և զարգացման աշխատանքներում:

Վերոնշյալ սոցիալ-մանկավարժական ծառայությունների հստակեցումը անմիջականորեն նպաստում է կենսական դժվար իրավիճակներում հայտնված երեխաների խնամքն ու պաշտպանությունն իրականացնող ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալ-մանկավարժական գործունեության կազմակերպման համակարգի զարգացմանը: Այն կարող է հիմք դառնալ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական մանկավարժի պաշտոնի անձնագրի մշակման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=128&code_id=458
2. http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=128&code_id=458

РАЗРАБОТКА ПАКЕТА УСЛУГ СОЦИАЛЬНОГО ПЕДАГОГА В ЦЕНТРАХ УХОДА И ПОДДЕРЖКИ ДЕТЕЙ В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ОРГАНИЗАЦИИ СОЦИАЛЬНО-ПЕДАГОГИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

АКОП ТАДЕВОСЯН

доцент кафедры Профессионального образования и прикладной педагогики АГПУ имени Х. Абовяна, кандидат педагогических наук

В статье мы представили разработанный нами пакет услуг социального педагога в центрах дневного ухода и защиты детей, который является, на наш взгляд, одним из направлений развития системы организации социально-педагогической деятельности в заведениях по уходу и поддержке детей, оказавшихся в трудной жизненной ситуации.

DEVELOPMENT OF THE PACKAGE OF SOCIAL PEDAGOGUE SERVICE IN THE CENTERS OF CHILDREN CARE AND SUPPORT IN THE CONTEXT OF DEVELOPMENT OF THE SYSTEM ORGANIZATIONS OF SOCIAL-PEDAGOGICAL ACTIVITY

HAKOB TADEVOSYAN

Associate Professor of the Chair of Professional Education and Applied Pedagogy, ASPU, PhD in Pedagogy

The article presents the social teachers' package created by us. It can be effectively used in children day care and protection centers. A range of social–pedagogical activities is presented to develop the organization system of children support and care.